



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2022 թվականի N 1509-Ն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 1745-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ և 14-րդ կետերը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման

տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման, ինչպես նաև ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1745-Ն որոշման՝

1) վերնագրում «, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով.

2) 1-ին կետի 1-ի ենթակետում «, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով.

3) ուժը կորցրած ճանաչել 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը.

4) N 1 հավելվածի՝

ա. վերնագրում և 1-ին կետում «, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով,

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովը (այսուհետ՝ ատեստավորման հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հանրակրթության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն կարգով և հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգերով:»,

գ. ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը,

դ. 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ գլուխների վերնագրերում և 5-րդ, 7-9-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ և 20-27-րդ կետերում «և հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով,

ե. 6-րդ կետից հանել «, հանրապետական հանձնաժողովը՝ 7 անդամից» բառերը,

գ. 10-րդ կետից հանել «, իսկ հանրապետական հանձնաժողովը ձևավորվում է նախարարի հրամանով» բառերը,

է. 15-րդ կետից հանել «, իսկ հանրապետական հանձնաժողովը՝ նախարարի յոթ» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան